ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» հունիսի 2016թ. N 100-Ա

ՆԱԻՐԱ ՎԱԼԵՆՏԻՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ՍՏՈՄՈՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի ստոմոտոլոգիական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի թիվ 4 որոշումը և նույն հանձնաժողովի եզրակացությունն ու Նաիրա Վալենտինի Ղազարյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի հունիսի 15-ից Նաիրա Վալենտինի Ղազարյանին՝ 3 տարի ժամկետով, նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի ստոմոտոլոգիական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ